ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի համայնքների միությունն իր անդամների ինքնուրույնությամբ, իրավունքների պաշտպանությամբ, կոլեգիալության և ապակուսակցականության սկզբունքներով առաջնորդվող՝ իր անդամների միասնական ու ներկայացուցչական ձայնն է Հայաստանում և արտաքին աշխարհում՝ փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ ամուր հիմքերով ու կառուցակարգերով: Միությունը ձգտում է, որպեսզի քաղաքական համակարգում Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմիններն ունենան ուժեղ և վստահելի ձայն՝ նպատակ ունենալով միասնական ջանքերով ազդելու քաղաքական օրակարգի վրա և պետական մարմինների հետ համագործակցաբար սահմանելու այն՝ ի շահ ՀՀ քաղաքացիների, համայնքների և տեղական ժողովրդավարության:

Տեղական ինքնակառավարման և առհասարակ Հայաստանի Հանրապետության զարգացման ներկայիս փուլում Միության առաքելությունը բնորոշում է կազմակերպության ձգտումը լինել հասուն և հավակնոտ օրակարգ ունեցող կառույց, որը պատրաստ է և ի վիճակի է լուծել տեղական ինքնակառավարման զարգացման ժամանակակից մարտահրավերները:

Միության հիմնական նպատակներն է պաշտպանել իր անդամների շահերը՝ խթանելով տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացումը, ինչպես նաև հզորացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները և խթանել անդամ համայնքների միջև փոխհամագործակցությունը:

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Միության շահերի պաշտպանության տեսլականի կարևորագույն բաղադրիչը Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի և տեղական ժողովրդավարության զարգացումն է և արդյունավետ ապակենտրոնացման խթանումը, որը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շարունակական ընդլայնում և ֆինանսական ապակենտրոնացում:

Միությունը տեղական ժողովրդավարության կայացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորում է համայնքների ձայնի լսելի լինելու հանգամանքը: Համայնքների հավաքական կարծիքը պետական կառավարման մարմիններին լսելի դարձնելու առումով Միությունը առանձնացնում է պետական կառավարման մարմինների և Միության միջև խորհրդակցությունների պաշտոնական մեխանիզմի իրավական ամրագրման հիմնահարցը՝ հավելյալ կշիռ հաղորդելու Միության և կառավարության հարաբերություններին և ընդլայնելու Միության ազդեցությունը տեղական ինքանակառավարման ոլորտի բարեփոխումների գործընթացի վրա:

Միության շահերի պաշտպանության գործունեությունը չի սահմանափակվում միայն համայնքային ու ազգային մակարդակներում լոբբինգ իրականացնելով, քանզի Միությունը լուրջ դերակատարում ունի միջազգային մակարդակում և ներկայացնում է իր անդամների շահերը մի շարք միջազգային կազմակերպություններում ու հաստատություններում (Եվրոպայի Խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Եվրոպական Միության Արևելյան գործընկերության տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնֆորանսում):

Հայաստանի համայնքների ձայնը լսելի դարձնելու և շահերի արդյունավետ պաշտպանության համար Միությունը ձգտում է իր կողմից իրականացվող և հետազոտական կարողությունները, կիրառելով շահերի պաշտպանության նոր գործիքներ և միասնական դիրքորոշումների մշակումը դարձնելով առավել մասնակցային:

ՏԻՄ-ԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումը և նրանց կարողությունների զարգացումը Միության կանոնադրական խնդիրների մյուս կարևոր ուղղությունն է: Այս նպատակով Միությունն աշխատում է իր անդամ համայնքների՝ համայնքի ղեկավարների, ավագանու անդամների և համայնքային ծառայողների կարողությունների զարգացման ուղղությամբ:

Կարևորելով նաև ՏԻՄ-երի իրական և առաջնահերթ կարիքների վրա հիմնված մասնագիտական աջակցությունը՝ Միությունը խորհրդատվություն է տրամադրում իր անդամ համայնքներին՝ փոխանցելով իր ցանցի ներսում առկա լավագույն փորձը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Միության առաքելության և ռազմավարական նպատակների հաջող իրականացումը ենթադրում է Միության ինստիտուցիոնալ կարողությունների կատարելագործում: Այս առումով Միությունը հատկապես կարևորում է իր ներքին կառավարման համակարգի շարունակական բարեփոխումը, աշխատակազմի կարողությունների զարգացումը և ֆինանսական կայունության ապահովումը:

Միությունը՝ որպես տեղական ժողովրդավարության և Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայուն զարգացմանը նպաստող ներկայացուցչական մարմին, աշխատում է նաև ընդլայնել իր տեսանելիությունը հայաստանյան տեղեկատվական դաշտում: Իր գործունեությունը լուսաբանելու, ինչպես նաև հանրությանը և որոշում ընդունողներին Միության դիրքորոշումների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով Միությունն օգտագործում է հանրային հաղորդակցության տարբեր գործիքներ և հարթակներ՝ սոցիալական ցանցեր, ԶԼՄ-ներ, www.caa.am վեբկայքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ